Agribusiness Teaching Center
In Corporation with Texas A&M and
the State Agrarian University of Armenia

# Newsletter

Issue 1 (6)
February 2006

² àõÎ
² ·ñáµÇ½Ý»ëÇ áõëáõóÙ³Ý Ï»Ýïñáݪ
¶áñÍáõÙ¿ î»Ë³ëÇ A&M Ñ³Ù³Éë³ñ³ÝÇ ¨ Ð³Û³ëï³ÝÇ
å»ï³Ï³Ý ³·ñ³ñ³ÛÇÝ Ñ³Ù³Éë³ñ³ÝÇ ·áñÍ³ÏóáõÃÛ³Ùµ

# î»Õ»Ï³·Çñ

ÂÇí 1(6)
÷»ïñí³ñ 2006

## Renovation Underway

*By Gaga NIKABADZE, ATC 4*
*Ani BEZHANISHVILI, ATC 3*



The Agribusiness Teaching Center is our second family. This does not sound strange for all of us, Armenians and Georgians. After entering this university we realize the importance of western type education, which provides good knowledge at the classes and good experience during our internships. We understand that only good education can help us help our countries.

The quality of education depends not only on the curriculum and teaching methods. The learning environment is also very important. This is why the ATC management always pays a serious attention to the development of ATC facilities. The renovation of the fifth floor is an excellent example.

The construction started in November 2005 when Hovnar LLC finally won the competition announced by ATC. It was preceded by the decision of the Armenian State Agrarian University's management to provide an appropriate space to expand ATC facilities and develop the university at large. The constructors are doing a good job and renovation will be complete by the end of this semester. The fifth floor will have office spaces for the faculty, a conference room, a large computer lab and other amenities. We hope to hold many different social activities in the conference room in addition to faculty meetings. We will now have a better place to meet also our guests from the business sector. And the new computer lab will be much larger and hopefully equipped with brand new computers to meet our today's needs.

We are convinced that the new space will positively impact our success as ATC students. This is one more reason for us to say thank you to our Director, our teachers, ASAU management as well as our patrons for their persistent efforts in improving the quality of our education here at ATC. ❍





## ԱՈւԿ-ի նոր հարկաբաժինը

*Գագա Նիկաբաձե , ԱՈւԿ 4*
*Անի Բեժանիշվիլի , ԱՈւԿ 3*



Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը մեր երկրորդ ընտանիքն է: Այս միտքը ամենևին տարօրինակ չէ մեզ՝ հայերիս ու վրացիներիս համար: ԱՈւԿ ընդունվելուց կարճ ժամանակ անց արդեն հասկացանք արևմտյան կրթական համակարգի առավելությունները, որն ապահովում է լավ գիտելիքներ լսարանում և փորձ՝ պրակտիկայի ընթացքում: ԱՈւԿ-ում մենք հասկացանք, որ միայն լավ կրթությունը կարող է մեզ օգնել՝ օգնելու մեր երկրներին:

Կրթության որակը կախված է ոչ միայն ուսումնական պլաններից ու ուսուցման մեթոդներից: Ուսուցման միջավայրը նույնպես շատ կարևոր է: ԱՈւԿ-ի ղեկավարությունը լուրջ ուշադրություն է դարձնում շենքային հարմարությունների բարելավման խնդրին: Հինգերորդ հարկի վերակառուցումը սրա առհավատչյան է:

Շինարարությունը սկսվեց 2005 թ. նոյեմբերին, երբ Հովնար ՍՊԸ-ն հաղթեց ԱՈւԿ-ի հայտարարած շինարարական մրցույթում: Անշուշտ, սրան նախորդել էր ՀՊԱՀ ռեկտորատի պատրաստակամ վերաբերմունքը՝ ԱՈւԿ-ի զարգացման ու ընդարձակման համար պատշաճ տարածք տրամադրելու հարցում:

Շինարարներն արագ և որակյալ աշխատանք են կատարում, որը կավարտվի մինչև կիսամյակի վերջ: Հինգերորդ հարկում կլինեն դասախոսների սենյակները, ժողովների սրահը, նոր ու ընդարձակ համակարգչային լաբորատորիան և այլ հարմարություններ: Հուսով ենք, դասախոսական կազմի ժողովներից զատ, սրահում նաև տարբեր միջոցառումներ կիրականացվեն: Բացի այդ, մենք հիմա պատշաճ տեղ կունենանք բիզնեսի ոլորտի մեր հյուրերին ընդունելու համար: Իսկ համակարգչային նոր լաբորատորիան, հուսով ենք, մուտք կգործենք նոր համակարգիչների առկայությամբ:

Համոզված ենք, որ նոր տարածքը դրականորեն կանդրադառնա մեր ուսմանը: Ուրեմն, մենք ունենք ևս մեկ պատճառ մեր տնօրենին, դասախոսներին, ՀՊԱՀ ղեկավարությանը, ինչպես նաև մեր հովանավորներին շնորհակալություն հայտնելու որակյալ կրթություն ստանալու համար իրենց ներդրած հետևողական ջանքերի համար: ❍

## ԱՈւԿ-ի պատմությունից. 2000 թ.

Հայկական գյուղատնտեսական ակադեմիան (2005 թ. վերանվանված Հայաստանի պետական ագրարային համալսարան), ԱՄՆ գյուղդեպարտամենտի Մարկետինգի աջակցության ծրագիրը և Տեխասի A&M համալսարանը համատեղ մշակել են ագրոբիզնեսի ակադեմիական ծրագիր՝ Հայաստանում իրականացնելու համար: Ծրագիրը սկսվեց 2000 թ. սեպտեմբերին:

Դենիել Դանը, Ջոն Նիքլսը, Սուսաննա Մեժլումյանը և Վարդան Ուռուտյանը առաջնորդեցին ոչ դյուրին այն ուղին, որը հետագայում հանգեցրեց ԱՈւԿ-ի հաջողությանը: Նախապատրաստական աշխատանքները ներառում էին գյուղակադեմիայում հատկացված հարկաբաժնի շենքի վերանորոգումը, ուսումնական պլանի մշակումը, համակարգչային լաբորատորիայի գործարկումը և դասախոսների հավաքագրումը: Երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների համար նախատեսված ուսպլանն ու դասավանդման կառուցվածքը հիմնված էր Տեխասի A&M համալսարանի գյուղատնտեսական տնտեսագիտության համապատասխան ծրագրի և Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի ուսպլանի ու առարկայական ծրագրերի տարրերի վրա: Ծրագիրը նպատակ էր հետապնդում պատրաստել մասնագետներ ագրոպարենային համալիրի ձեռնարկություն-ներում առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար:

Ծրագրին մասնակցելու ցանկություն ունեցող 76 ուսանողներից առաջին փուլում ընտրվեցին 40-ը, ովքեր մասնակցեցին ամռանը գյուղակադեմիայում ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի կազմակերպած անգլերենի երկամսյա դասընթացին, որից հետո ընդամենը 26-ն ընտրվեցին ԱՈւԿ-ում սովորելու համար: Առաջին դասախոսներն էին Դանիել Դանը, Էմերսոն Բաբը, Էնդրյու Մաթեստիկը, Գայանե Կյուրեղյանը և Ռոզմարի Վենեցիալեն:

2000 թ. սեպտեմբերի 4-ին տեղի ունեցավ ԱՈւԿ-ի հանդիսավոր բացումը, որին մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության առաջին փոխնախարար Սամվել Ավետիսյանը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնը, ՀԳԱ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը, ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի՝ առաքելությունն ավարտած և նորանշանակ տնօրեններ Բիլ Միլլերն ու Քրեյգ Ինֆանգերը: Դեսպան Լեմոնն իր խոսքում կարևորեց ԱՈւԿ-ի դերը Հայաստանում գյուղատնտեսության և ագրոբիզնեսի զարգացման ընդհանուր համատեքստում: Նա ԱՈւԿ-ի առաջին 26 ուսանողներին հորդորեց ակադեմիական դասընթացի և գործնական գիտելիքների համադրման ընձեռած հնարավորությունն օգտագործել սեփական երկրի գյուղատնտեսության և ագրոբիզնեսի զարգացման նպատակով: Պարոն Թարվերդյանը նոր կենտրոնն անվանեց «ԱՄՆ գյուղդեպարտամենտի Հայաստանում իրականացրած գիտակրթական և խորհրդատվական բնույթի ամբողջ օժանդակության թագն ու պսակը»:

Բիլ Միլլերը, Քրեյգ Ինֆանգերը և Ջոն Նիքլսը վստահություն հայտնեցին, որ կրթական այս նոր միավորի ապագա շրջանավարտները բարձր որակավորում ունեցող ագրոբիզնեսի մասնագետներ կլինեն և իրենց նշանակալից դերը կունենան զարգացող ագրոբիզնեսի բնագավառում: Ի դեպ, ԱՈւԿ-ը դարձավ Բիլ Միլլերի ևս մեկ հոգեզավակը, մարդ, որի ռազմավարական տեսլականը թույլ տվեց հետագայում հաջողությունների հասնել ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի իրականացրած բազմաթիվ ծրագրերում:

«Ագրոբիզնեսի բակալավրի աստիճանը ենթադրում է բիզնեսի այնպիսի սկզբունքների շեշտադրումը, ինչպիսիք են ֆինանսները, շուկայաբանությունը, կառավարումը և գործարար վերլուծությունը»,- ասաց ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի կրթական ծրագրերի գծով կառավարիչ և ԱՈւԿ-ի առաջին տնօրեն Դենիել Դանը: Նա նշեց, որ հայաստանյան գյուղմթերքի արտահանման նշմարվող հեռանկարների հետ զուգահեռաբար աճում է ագրոբիզնեսի կառավարիչների պահանջը, որոնց պատրաստմանն է կոչված Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը:

Իրադարձությունը լայնորեն լուսաբանվեց հայաստանյան լրատվամիջոցներով: ❍

## From the History of ATC: 2000

The Armenian Agricultural Academy (renamed the Armenian State Agrarian University in 2005), USDA MAP, and Texas A&M University formed an alliance to develop an academic program in agribusiness in Armenia. An undergraduate agribusiness program in Esnglish was proposed to conduct in fall 2000.

Daniel Dunn, John Nichols, Susanna Mezhlumyan, and Vardan Urutyan led the difficult way to the future success of the Agribusiness Teaching Center. The preparatory works included renovation works, curriculum development, classroom design and



computer laboratory equipped with computers, hiring and training teachers. The program was designed for the third and fourth years, and the curriculum and learning structure was developed based on the program of the agricultural economics department of Texas A&M University including also elements of the Armenian Agricultural Academy's curriculum and learning structure. The program aimed to produce graduates to work in managerial positions in food and agriculture system. It was proposed to involve students from rural areas in the program, and scholarships to the advanced students.

From 76 applicants wishing to join the program, 40 were selected. A two-month English course was designed for them and only 26 were selected to go to the degree program. Daniel Dunn,



Emerson Babb, Andrew Metestic, Gayane Kyureghyan, and Rosemary Veneziale were selected as faculty for the agribusiness program.

September 4, 2000 was the day of the opening of the Agribusiness Teaching Center with the RA First Deputy Minister of Agriculture Samvel Avetisyan, U.S. Ambassador to Armenia Michael Lemmon, AAA Rector Arshaluys Tarverdyan, outgoing and newly appointed Directors of USDA MAP Bill Miller and Craig Infanger participating. Ambassador Lemmon stressed the signifi-

Continued on page 3

cance of ATC in the overall context of the agricultural development in Armenia. Ambassador Lemmon challenged the first 26 ATC students to use this unique opportunity of combining the academic classes and practical knowledge provided by the new curriculum for creating the future of the Armenian agriculture and agribusiness. Rector Tarverdyan named the new Center “the peak of the entire USDA assistance in research, education and extension areas”.

The outgoing and incoming Directors of USDA MAP Bill Miller and Craig Infanger as well as Dr. John Nichols of Texas A&M University welcomed the opening of the Agribusiness Teaching Center. They expressed confidence that the future graduates of this new unit with a status of an AAA department will be highly qualified agribusiness specialists who will play a significant role in the growing Armenian agribusiness. ATC became another spiritual child for Bill Miller whose strategic vision led to many critical accomplishments within USDA MAP program.

‘’Agribusiness bachelor’s degree implies highlighting principles of business like finance, marketing, management, and business analysis on the basis of general knowledge,’’ said USDA MAP Education Program Manager Daniel Dunn. He said this degree prepares the graduates for managerial positions in agribusiness enterprises. Along with the visible growth in export opportunities for Armenian agricultural products, the need for agribusiness managers is simultaneously increasing.

The event was largely covered by Armenian media.

# Collaboration Perspectives with ESSEC

Vardan Urutyan, ICARE Deputy Director and Teacher of Principles of Finance and Financial Analysis spent two weeks in ESSEC Business School in France in January through an Individual Mobility Grant.

“One of the objectives of my trip was to revise, update and develop new course programs in Finance and Entrepreneurship for the students in Agribusiness major”, said Dr. Urutyan upon his return, “I worked with professors who were teaching subjects close to what I teach in Armenia.”

Some of the courses followed were “Corporate Finance”, “Finance Refresher”, “Theory of Corporate Finance”, “Corporate Finance: Mergers and Acquisitions”, “Agri-Food Commodity Markets”, “Development of Business Plan”, and others. He established solid academic contacts with the ESSEC’s International Agri-food Management Institute and with the Department of Finance. He also established good research contacts with the Chair for Excellence in European Food Chain. He discussed possibilities and aspects of future collaboration with them.

Based on syllabuses and course outlines used at ESSEC, Dr. Urutyan updated his syllabuses in “Corporate Finance”, “Financial Management” and “Agribusiness Entrepreneurship” courses, which he teaches at ATC.

The ESSEC Business School and IMIA in particular is recognized as a center of excellence in international agri-food and agribusiness education. It offers training, research and network facilitation services to the local and international players in agri-food system. “Our institutional cooperation will be very useful in our further progress and achievements,” Vardan said. In turn, he welcomed the interest from ESSEC professors in teaching and carrying out research activities in Armenia. One of the interesting suggestions was from Julien Morel, Executive Director of the ESSEC Ventures: any student or group of students from ATC completing the entrepreneurship courses, demonstrating strong moti-



Continued on page 4

# Գործակցության հեռանկարներ ESSEC-ի հետ

ԱՀԿՄԿ փոխտնօրեն և ԱՈւԿ-ի Ֆինանսների և ֆինանսական վերլուծության դասախոս Վարդան Ուռուտյանը անհատական դրամաշնորհի միջոցով հունվար ամսին այցելեց Ֆրանսիայի ESSEC բիզնեսի դպրոց:

«Իմ ուղևորության նպատակներից մեկը ֆինանսների և ձեռներեցության ծրագրերի վերանայումը, թարմացումը և նոր դասընթացի մշակումն էին` ագրոբիզնես մասնագիտության շրջանակներում, - ասաց պրն Ուռուտյանը,- Ես աշխատում էի այն դասախոսների հետ, ում դասավանդած առարկաները մոտ են ԱՈւԿ-ում իմ դասավանդած առարկաներին»:

Ծանոթանալով «Կորպորատիվ ֆինանսներ», Ֆինանսական գիտելիքների ներածություն», «Կորպորատիվ ֆինանսների տեսություն», «Ագրոպարենային ապրանքների շուկաներ», «Գործարար պլանների մշակում» և այլ դասընթացների, Ուռուտյանը ակադեմիական լուրջ կապեր հաստատեց ESSEC-ի Ագրոպարենային կառավարման միջազգային ինստիտուտի և ֆինանսական դեպարտամենտի հետ: Նա նաև գործնական հետազոտական կապեր է հաստատել «Եվրոպական պարենային շղթայի հետազոտությունների ամբիոնի հետ` քննարկելով ապագա գործակցության հարցեր: ESSEC-ի առարկայական ծրագրերի հիման վրա դոկտ. Ուռուտյանն արդեն թարմացրել է իր Կորպորատիվ ֆինանսներ, Ֆինանսական կառավարում և Ագրոբիզնեսի ձեռներեցություն առարկաների ծրագրերը:

Ըստ Վարդան Ուռուտյանի, ESSEC-ի բիզնես դպրոցը և մասնավորապես IMIA-ն ագրոպարենային և ագրոբիզնեսի կրթության ճանաչված միջազգային կենտրոններից են: Դրանք հրամցնում են ուսուցման, հետազոտությունների և գործակցային ցանցի զարգացման ծառայություններ ագրոպարենային համալիրի տեղական և միջազգային սուբյեկտների հետ: «Մեր ինստիտուցիոնալ գործակցությունը շատ օգտակար կլինի ապագա առաջընթացի և նվաճումների առումով»,- ասաց Վարդանը: Նա ողջունեց ESSEC-ի դասախոսների շահագրգռվածությունը` իրենց հերթին ԱՈւԿ-ում դասավանդման և հետազոտական աշխատանքներ իրականացնելու հարցում: Հետաքրքրական առաջարկներից մեկի հեղինակը ESSEC Վենչրզի գործադիր տնօրեն Ժուլյեն Մորելն էր. ԱՈւԿ-ի` ձեռներեցության դասընթացն ավարտած որևէ ուսանող կամ ուսանողների խումբ, ովքեր ընկերություն հիմնելու լուրջ շարժառիթներ և լուրջ ցանկություն ունեն, կարող են դիմել Վենչրզի բիզնես ինկուբատորին` ներկայացնելով պատշաճ գործարար հայտ: Ինկուբատորի պրոֆեսիոնալ աշխատակազմից նրանք կստանան մեթոդաբանական և կազմակերպչական բնույթի աջակցություն: «Կարծում եմ, սա նաև ինստիտուցիոնալ առումով մեծ ազդեցություն կունենա և կնպաստի ԱՈւԿ-ում ձեռներեցության բնագավառի կրթության հետագա զարգացմանը»,-ասաց Վարդանը:

Ուռուտյանի կարծիքով, անհատական դրամաշնորհների (IMG) ծրագիրը դասախոսական կազմի պրոֆեսիոնալ աճի համար օգտակար և բարձրարժեք լծակ է: «Այս ուղևորությունն ինձ օգնեց ոչ միայն արդիականացնելու «Ֆինանսներ և ձեռներեցություն» դասընթացի ծրագիրը, այլև իմ հաստատության` ԱՈւԿ-ի, համար ձեռք բերել ակադեմիական և հետազոտական աշխատանքների գծով համագործակցության նոր ուղիներ`

Continued from page 1

vation, and having a real desire to create a company can contact the Ventures Incubator and submit a sound proposal. They will receive methodological and logistical support from the incubator's professional staff. "I think this will also have a high institutional impact and will further develop the Entrepreneurship Education at ATC," Vardan said.

He considers IMG as a useful and precious tool for professional development of faculty. "This IMG visit helped me not only modernize my course outlines in Finance and Entrepreneurship but also gave my institution, ATC, an opportunity to establish academic and research contacts with a realistic perspective to meet educational and development challenges head on," Dr. Urutyan stated.

Vardan expressed his true gratitude to the European Commission/European Training Foundation and the TEMPUS program for providing this opportunity to visit ESSEC Business School. He extends special thanks to the Department of Finance and ESSEC IMIA, in particular, to Dr. Francis Declerck, for providing excellent working environment. ❍

առաջիկա կրթական և զարգացման մարտահրավերներին ընդառաջ գնալու իրատեսական հեռանկարով»,-նշեց Վարդան Ուռուտյանը: Նա իր երախտագիտությունն արտահայտեց Եվրահանձնաժողովի Եվրոպական ուսուցման հիմնադրամին և ՏԵՄՊՈւՍ ծրագրին` ESSEC-ի բիզնեսի դպրոց այցելելու հնարավորության համար: ❍




# ATC Students Visit Orphanage

***by Zhanna GRIGORYAN, ATC 3***
***Photos cortesy Pamela J. Karg, Individual Volunteer in Mission at UMCOR-Armenia and ATC teacher***

At the beginning of February, Agribusiness Teaching Center students visited Special Kindergarten Orphanage in Yerevan. The idea for the visit grew out of coursework 3rd year students did in their Public Speaking class during the fall semester. They were assigned to do informative speeches on various NGOs, operating in the South Caucasus. Those organizations included UMCOR and its micro-lending program AREGAK, Habitat for Humanity Armenia, Heifer Project International South Caucasus, and others. After learning about what others are doing to help the region's countries through their transitions to become free and open societies, the students decided to do something, too.

A few students spent a day helping lay a floor at a HFHA



house and distributing UMCOR school, hygiene, and sewing kits to the families. Another student attended HPI training to prepare to become a volunteer, when she returns to her native Republic of Georgia this summer. Then we, the 3rd year students, decided to go to an orphanage, and some 4th year students joined in the day. The Special Kindergarten Orphanage was a very comfortable place where children can live and learn. We decided to buy clothes, candies, some toys and some vertical blinds to continue building renovations. ATC students donated money during December, and several students also donated toys to give to chil-

Continued on page 5

# ԱՈւԿ-ի ուսանողներն այցելում են մանկատուն

***Ժաննա Գրիգորյան, ԱՈւԿ 3***
***Լուսանկարները` Պամելա Քարգի***



Փետրվարի սկզբին ԱՈւԿ-ի ուսանողներն այցելեցին Երևանի հատուկ մանկապարտեզ-մանկատուն: Այցելության գաղափարը ծնվել էր 3-րդ կուրսում բանախոսության դասախոսության ժամանակ: Նրանք առաջադրանք էին ստացել ելույթներ ունենալ Հարավային Կովկասում գործող հասարակական կազմակերպությունների մասին: Իմանալով ԱՄՔՈՐ-ի, վերջինիս վարկային ծրագիրն իրականացնող ԱՐԵԳԱԿ համակարգի և այլ ՀԿ-ների` անցումային փուլում գտնվող երկրներին ցուցաբերած օգնության մասին, ուսանողները որոշեցին իրենք էլ ինչ-որ բանով օտգակար լինել իրենց երկրներին` Հայաստանին և Վրաստանին:

Մի քանի ուսանողներ մեկ օր անցկացրին` պատրաստելով HFHA-ի կառուցած տան հատակը և ԱՄՔՈՐ-ի տրամադրած դպրոցական, հիգիենայի և կարուձևի պարագաները մի շարք ընտանիքների բաժանելով: Ուսանողներից մեկը հաճախեց Հեյֆեր միջազգային կազմակերպության ուսուցողական դասընթացին, որտեղ սովորեց, թե ինչպես են դառնում կամավոր, քանի որ մտադիր է առաջիկա ամառվա ընթացքում կամավորական գործունեություն ծավալել իր հայրենի Վրաստանում: Իսկ ահա երրորդկուրսեցիները որոշեցին այցելել մանկատուն:

Մանկատուն այցելելու օրը մեզ միացան նաև մի քանի չորրորդկուրսեցիներ: Նորքի հատուկ մանկատանը, որտեղ մենք այցելեցինք, երեխաների եպրելու և սովորելու համար հարմարավետ պայմաններ են ստեղծված: ԱՈւԿ-ի ուսանողները նրանց համար գնեցին հագուստ, խաղալիքներ, հրուշակեղեն, ինչպես նաև ուղղահայաց շերտավարագույրներ: Դեռևս դեկտեմբերին ԱՈւԿ-ի ուսանողները դրամ և խաղալիքներ էին հավաքել մանկատան երեխաների համար: Բացի այդ, ուսանողները տնօրինեցին այն գումարը, որը նվիրաբերել էր Մարսիա Էվանսը Միացյալ մեթոդիստների եկեղեցին Ֆլորիդայում: Տկն Էվանսը և ԱՄՔՈՐ-ի ԱՐԵԳԱԿ ծրագրի կամավոր է եղել Երևանում: Նա ընկերացել էր ԱՈւԿ-ի ուսանողների հետ: Հայաստանից հետո նա որպես կամավոր ծառայել է նաև Վրաստանում:

Երեխաների համար մեր այցելությունը մեծ ուրախություն էր: Այս մանկատանը 82 երեխաներ են կենում: Նրանց առավելագույն տարիքը 9-ն է: Նրանց այստեղ գալու պատճառները տարբեր են: Ոմանց ծնողներն են լքել: Ոմանք ծնողներ չունեն, ոմանք էլ, ցավալի է նշել, առհասարակ մոռացված են ծնողներից: Մենք

Þ ³ ñáõÝ ³ ÏáõÃÛáõÝÁ` 5-ñ¹ ¿çáõÙ

*Continued from page 1*

dren. In addition, we used the money donated by Marcia Evans and Faith United Methodist Church in Ft. Myers, Florida. Ms. Evans served as an Individual Volunteer in Mission (IVIM) at UMCOR's AREGAK program in Yerevan, during which she also befriended many ATC students. When Evans left Armenia, she then served 7 weeks as a volunteer at a youth house in Tbilisi, Georgia, before returning home to America.

The children were very happy seeing us. There are approximately 82 children at this orphanage. There are no children older than 9 years old. The staff takes them to the theater and the circus often. The children are brought to the orphanage for different reasons. Parents have abandoned some of them. There are children who do not have parents and, it is hard to say, there are children whom their parents don't even remember. We felt lucky to speak to the children and to draw them out, making their day full of fun and laughter. The children were very smart, beautiful, and clever. We agreed the visit was a very big chance for us to communicate with the children, and we have decided to visit them again because it was pleasant for both.

After bringing smiles to the children at the orphanage, we shared in our own smiles of doing something nice for others while eating at Pizza di Roma in the Yerevan center.

***A postscript from Pam KARG***
***Teacher of Public Speaking and Business Management Ethics.***

*This was a huge project for the students. Though most of the money was left behind by Marcia from her Congregation as an impetus to helping make it possible, I am proud of the large scale organizational work the students did in accomplishing all the tasks. But I also mean it was a huge project, because for both the Armenian and the Georgian students this was perhaps the first opportunity to help complete strangers. They have so many extended family members and friends that they have to worry about that they rarely fathom helping anyone else. So the donation from Marcia and her church had a double impact – it made life a little better for the youngsters at the orphanage and it helped build capacity within the ATC students about social responsibility (something I'm teaching this Spring semester to 4th year students in the Business Management Ethics class.)* ❍

կարողացանք գոնե մեկ օրով նրանց ժամանակը հագեցած դարձնել՝ զվարճանքներով ու ծիծաղով լեցուն: Այդ մանկատան երեխաները շատ խելացի են և գեղեցիկ: Մենք այն կարծիքին ենք, որ որպես ԱՈւԿ-ի ուսանողների՝ մեզ համար լավ հնարավորություն էր շփվելու երեխաների հետ: Շփումը երկուստեք հաճելի էր և մենք որոշեցինք հետագայում նորից այցելել այդ երեխաներին: Համենայնդեպս, բավարարության զգացում էր համակել մեզ այն առումով, որ մի կարևոր գործ ենք արել:

***Հետգրություն Պեմ Քարգից***

Սա հրաշալի ծրագիր էր: Թեև դրամի մեծ մասը Մարսիան էր տրամադրել, սակայն ուսանողները կազմակերպչական մեծ ծավալի աշխատանք իրականացրին: Ես հպարտանում եմ նրանց կատարած աշխատանքով, որը նաև իրենց որոշակի հմտություններ սովորեցրեց իրենց: Ծրագիրը հրաշալի էր նաև այն առումով, որ դրան մասնակցած թե հայ և թե վրացի ուսանողների համար սա ուրիշներին օգնելու թերևս առաջին փորձն էր. չէ որ նրանք մեծ թվով հարազատներ ու ընկերներ ունեն, ովքեր օգնության կարիք ունեն, մինչդեռ իրենք կարողացան կոնկրետ օգնություն ցուցաբերել միանգամայն անծանոթ մարդկանց՝ մանկատան երեխաներին: Այսպիսով, Մարսիայի և իր եկեղեցու ցուցաբերած օգնությունը կրկնակի ազդեցություն ունեցավ՝ նպաստելով թե երեխաների կյանքի փոքր-ինչ բարելավմանը և թե ԱՈւԿ-ի ուսանողների մեջ սերմանելով սոցիալական պատասխանատվության զգացումը (ի դեպ, այս թեման ներառված է իմ դասավանդած Բիզնեսի կառավարման էթիկա առարկայի ծրագրում): ❍



# ATC Teachers Won CRC Competition

A group of ATC teachers, Vardges Hovhannisyan, Vardan Urutyan, and Rafael Bakhtavoryan, participated in a competition for a new course development announced by the Curriculum Resource Centre (CRC), Budapest and they won it. The new course they intended to develop is entitled "Rural Economics and Development Policy" and is devoted to studying the broad coverage of versatile problems facing farmers and rural population at large. In addition to these theoretical "farm problems" and problems of rural development, which are characteristic of rural areas in all countries, a specific focus is exerted on the particular issues embracing Rural Armenia.

As a group leader, Vardges Hovhannisyan participated in a workshop organized by CRC. The introductory sessions of the training were aimed to provide participants with background knowledge, a repertoire of skills and practice opportunities for the improvement of their course design and teaching. The training also helped participants cope with the increasing demands for professionalism and demonstration of skills and appropriate strategies required of university faculty. In providing such training, the organizers focused on the relationship between the research and the classroom, the content of an academic course and the various possible methods of its delivery. In the advanced sessions of the training they exposed the participants to some of the most rel-

# ԱՈւԿ-ի դասախոսները շահել են CRC-ի մրցույթը

Բուդապեշտի Ուսումնական պլանների ռեսուրս կենտրոնի վերջերս հայտարարած մրցույթի հաղթողների թվում էր ԱՈւԿ-ի դասախոսների խումբը՝ Վարդգես Հովհաննիսյանը, Վարդան Ուռուտյանը և Ռաֆայել Բախտավորյանը: Նրանց ներկայացրած նոր դասընթացը կոչվում է «Գյուղական տնտեսությունը և զարգացման քաղաքականությունը» և նվիրված է ֆերմերների և առհասարակ գյուղական բնակչության բազմազան հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Գյուղի զարգացման տեսական հիմնախնդիրներից զատ, որոնք հատուկ են բոլոր երկրների գյուղական վայրերին, առանձնահատուկ կերպով շեշտադրվում են Հայաստանի գյուղական վայրերին բնորոշ հիմնախնդիրները:

Որպես խմբի ղեկավար, Վարդգես Հովհաննիսյանը փետրվարին մասնակցեց Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում CRC-ի կազմակերպած աշխատաժողովին: Ներածական նիստերի ժամանակ մասնակիցներին հրամցվեցին գիտելիքներ, հմտություններ և գործնական հնարավորություններ՝ իրենց դասընթացների մշակման և դասավանդման գործընթացի բարելավման նպատակով: Ուսուցումը օգտակար էր նաև բուհական դասախոսին ներկայացվող պրոֆեսիոնալիզմի, հմտությունների և պատշաճ ռազմավարության լավագույն դրսևորման պահանջները բավարարելու առումով:

Ուսուցման կազմակերպիչները առանձնահատուկ

evant issues, problems and developments in higher education that are likely to become part of their professional activity as faculty.

The preparation works will start on March 1 through August, and the new course will be taught to the ATC students starting this Fall and extend over December.

"The course is highly innovative," said Dr. Hovhannisyan, "It will benefit the ATC students in a sense that theoretical knowledge will be strengthened by the research study results conducted by the ATC faculty in rural Armenia." In addition, the students will be required and encouraged by teachers to research the needs and wants of rural population, farmers and non-farmers. In this process, the students will learn by doing, which, according to Vardges, will prompt a meaningful and effective education in this particular sphere. ❍



ուշադրություն դարձրին հետազոտական և լսարանային աշխատանքների միջև կապին, ակադեմիական դասընթացների բովանդակությանը և դասավանդման զանազան մեթոդներին:

Ուսուցման հաջորդ փուլում մասնակիցներին ծանոթացրին բարձրագույն կրթության ոլորտի առավել բնորոշ հիմնախնդիրներն ու ակնկալվող զարգացումները, որոնք կարող են վերաբերել դասախոսների գործունեությանը:

Ծրագրի նախապատրաստական փուլը կիրականացվի մարտից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում: Իսկ նոր դասընթացը ԱՈւԿ-ում կդասավանդվի 2006 թ. աշնանային կիսամյակին: Դա մեծապես նորարարական դասընթաց կլինի: Այն ԱՈւԿ-ի ուսանողների համար օգտակար կլինի այն առումով, որ տեսական գիտելիքները կամրապնդվեն Հայաստանի գյուղական վայրերում ԱՈւԿ-ի դասախոսների կատարած հետազոտական աշխատանքների արդյունքներով: ❍

# USDA Faculty Exchange Program for ASAU Teachers

USDA Foreign Agricultural Service sponsors a five-year faculty exchange program for NIS and East European countries. Within the program, Gevorg Keshishyan and Goharik Khachatryan of the Armenian State Agrarian University spent the fall semester in the U.S. univerities. Another 19 faculty members from Bulgaria, Russia, Kazakhstan, Ukraine, and other countries participated.

Mr. Keshishyan and Ms. Khachatryan took Ag Economics, Ag Marketing, Extension Education, International Econimics, Macroeconimics, Business Statistics, Econometrics and Time Analysis at relatively PennState and Colorado Universities. Goharik and Gevorg made a presentation on their training for ATC students in a regular Friday seminar on February 24.




They both were very pleased with the courses they took, the new knowledge and approaches they took on while studying in the U.S. Gevork, in particular, was very inspired with his study at PennState. "After one semester in world known universities like PennState and Colorado, we now understand clearly: there is so much to change in our activity as Armenian Agricultural University faculty," he said, "'These changes don't only refer to curriculum and course design, but also in our everyday teaching process."

The ASAU teachers thanked Bill Spenser and Arndy Sioly at Colorado and Lou Moore and Jim Dunn at PennState for their exceptional work making their studies and stay excellent.

According to Gevorg Keshishyan, with this exchange initiative, USDA FAS is providing exceptional opportunity for young university teachers like himself to significantly improve their teaching methods and approaches in the course of university education reform underway in Armenia and in other post-communist countries. The many questions by ATC students proved his words. ❍

# ԱՄՆ ԳԴ դասախոսների փոխանակման ծրագիր ՀՊԱՀ դասախոսների համար

ԱՄՆ գյուղդեպարտամենտի Արտաքին գյուղատնտեսական ծառայությունը հովանավորում է ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների համար դասախոսների փոխանակման հնգամյա ծրագիր, որի շրջանակում Հայաստանի պետական ագրարային համալսարանի երիտասարդ դասախոսներ Գևորգ Քեշիշյանն ու Գոհարիկ Խաչատրյանը 2005 թ. աշնանային կիսամյակն անցկացրին ԱՄՆ համալսարաններում: Ծրագրին մասնակցում էին ևս 19 դասախոսներ Բուլղարիայից, Ռուսաստանից, Ղազախստանից, Ուկրաինայից և այլ երկրներից:

Պրն Քեշիշյանն ու օր. Խաչատրյանը գյուղատնտեսական տնտեսագիտության, գյուղատնտեսական մարկետինգի, գիտափյուռի կրթության, միջազգային տնտեսագիտության, մակրոէկոնոմիկայի, գործարար վիճակագրության և ժամանակային վերլուծության դասընթացներ անցան համապատասխանաբար Փենսիլվանիայի և Կոլորադոյի համալսարաններում: Փետրվարի 24-ին՝ ուրբաթօրյա ավանդական սեմինարի ժամանակ, Գոհարիկն ու Գևորգը ԱՈւԿ-ի ուսանողներին ներկայացրին իրենց ուսումնառության արդյունքները:

Երկուսն էլ գոհ էին դասընթացներից, դրանց հրամցրած գիտելիքներից ու մոտեցումներից: Գևորգը, մասնավորապես, ոգևորված էր այն ամենով, ինչ ինքը ձեռք էր բերել ՓենՍտեյթում: «Աշխարհում հայտնի այդ համալսարաններում մեկ կիսամյակ ուսանելուց հետո մենք այժմ հստակորեն պատկերացնում ենք, որ, որպես Հայաստանի գյուղատնտեսական համալսարանի դասախոսներ, դեռևս շատ բան ունենք փոխելու մեր ամենօրյա գործունեության մեջ, - ասաց նա,- Այդ փոփոխությունները վերաբերում են ոչ միայն ուսումնական պլաններին և դասընթացի կազմմանը, այլ նաև ամենօրյա դասավանդման գործընթացի կազմակերպմանը»:

ՀՊԱՀ դասախոսները շնորհակալություն հայտնեցին Բիլ Սիոլիին ու Կոլորադոյում և Լու Մուրին ու Ջիմ Դանին՝ Փենսիլվանիայում՝ իրենց ուսումնառությունը գերազանց կազմակերպելու համար: Ըստ Գևորգ Քեշիշյանի, ԱՄՆ ԳԴ Արտաքին գյուղատնտեսական ծառայությունն փոխանակման այս ծրագրով ՀՊԱՀ դասախոսներին աննախադեպ հնարավորություն է ընձեռում էապես բարելավելու իրենց դասավանդման մեթոդներն ու մոտեցումները՝ Հայաստանում ընթացող կրթական բարեփոխումների ընդհանուր համատեքստում: Ուսանողների բազմաթիվ հարցերը եկան հաստատելու Գևորգի միտքը: ❍